

# Visa «ԲԱՐԵՐԱՐ» Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	300 ՀՀ դրամ ամսական
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք	Առանց գրավային ապահովվածության - ՀՀ դրամ արժույթով քարտեր՝ 19.5%-21% - ԱՄՆ դոլար արժույթով քարտեր՝ 17%-20% - Եվրո արժույթով քարտեր՝ 16%-19%  Գրավային ապահովվածությամբ՝ -ՀՀ դրամ արժույթով քարտեր՝ 18%-21% - ԱՄՆ դոլար արժույթով քարտեր՝ 15%-18% - Եվրո արժույթով քարտեր՝ 14%-17%
4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գործարքների համար)	գործարքի ձևակերման օրվանից մինչև հաջորդ ամսվա 7-րդ օրացուցային օրը
5. Ամսական պարտադիր մարումներ	10%
6. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	<ul style="list-style-type: none"> <li>American Express Cashback՝ 300 ՀՀ դրամ ամսական</li> <li>Mastercard Standard՝ 2,000 ՀՀ դրամ միանվագ</li> <li>ArCa «ՄԻՐ» 2,000 ՀՀ դրամ միանվագ</li> </ul>
7. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	անվճար
8. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
9. Քարտի գործողության ժամկետ	5 տարի
10. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկի տրամադրման կետերում՝	
• <i>ՎԿՐԱ Բանկ (արտարժույթ կանխիկացնելու դեպքում գործում է այդ պահին Բանկում գործող սակագինը, որը հրապարակվում է Բանկի «Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման» սակագներում)</i>	<ul style="list-style-type: none"> <li>դրամային քարտերի համար՝ օրական մինչև 1,000,000 ՀՀ դրամ՝ 0%</li> <li>օրական 1,000,000 ՀՀ դրամից ավելի (գերազանցող մասի նկատմամբ)՝ 0.5%</li> <li>արտարժույթային քարտերի համար՝ 0.5%</li> </ul>
• <i>Այլ բանկեր Հայաստանում</i>	1%
• <i>Այլ բանկեր արտերկրում</i>	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
11. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով	1%
12. Անկանխիկ վճարում քարտով	անվճար
13. Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> <li>1,000,000 ՀՀ դրամ</li> <li>2,000 ԱՄՆ դոլար</li> <li>2,000 Եվրո</li> </ul>
14. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	5
15. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> <li>1,000,000 ՀՀ դրամ</li> <li>2,000 ԱՄՆ դոլար</li> <li>2,000 Եվրո</li> </ul>
16. ՀՀ տարածքում քարտից քարտ փոխանցումներ առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	0.5%
17. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ <sup>2</sup>	0.2%
18. SMS-տեղեկացում ծառայություն	15 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱՄՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)
19. Քարտի փոխարինում (Հայաստանում)	2,000 ՀՀ դրամ
20. USSD-տեղեկացում ծառայություն	10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱՄՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)

## Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ՎԿՐԱ ԲԱՆԿԻՄ Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 16 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժույթային ավանդի դեպքում - 7 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից ավել), և՛ արտարժույթային ավանդների դեպքում – միայն դրամային ավանդը՝ մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժույթային ավանդների դեպքում - դրամային ավանդը և արտարժույթային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվի ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկի տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապանի բանավոր հանձնարարությամբ:

## Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

- Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:
- Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախսի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից: Լրացուցիչ քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար՝ բացառությամբ լրացուցիչ American Express Cashback քարտի, որի սպասարկման վարձը գանձվում է ամսական սկզբունքով:
- Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռնում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում:

<sup>1</sup> Վարկային գիծ չունեցող քարտերի գերածախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն չափով:

<sup>2</sup> Բացի նշված սակագնից Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց կիրառվում է նաև սպասարկող բանկի միջնորդավճար՝ 0.3%: Ընդ որում, ՀՀ այլ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում ևս կարող է կիրառվել սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկում սպասարկող բանկի կողմից:

Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:

- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում: